# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ԿԱՊԱՆԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

17.08.2024



**Շնորհավո՛ր տոնդ, Կապա՛ն:**

Ջերմորեն շնորհավորում եմ կապանցիներին, քաղաքի հյուրերին, մեզ բոլորիս՝ Սյունյաց մարզկենտրոն Կապանի օրվա կապակցությամբ:

Անհնար է գեթ մեկ անգամ լինել այս ջերմ քաղաքում ու չսիրել այն. ուստի այսօր տոն է, որն ավանդաբար միավորում է ոչ միայն նրա բնակիչներին և հյուրերին, այլև նրանց, ովքեր անկեղծորեն սիրում են և ում հոգեհարազատ է Կապանը:

Մաղթում եմ, որ սիրելի Կապանի տարեգրությունը լեցուն լինի միայն բարի, լուսավոր ու զարգացում բերող իրադարձություններով:

Թո՛ղ դարավոր պատմությամբ ամրագրված արժեքները, լավագույն ավանդույթներն ու կապանցիների հյուրընկալ սրտերը միահյուսվեն ժամանակին համահունչ ու դինամիկ զարգացման ուղղուն, որ որդեգրել է քաղաքը, և արդյունքում այն կանչող տուն լինի դրսում բնակվող բոլոր կապանցիների համար:

Իհարկե, քաղաքի ամենամեծ հարստությունն իր բնակիչներն են, որոնց պետք է միավորի սրտացավությունը, ուշադրությունն ու հոգատարութունը Կապանի հանդեպ և ի շահ Կապանի:

Թո՛ղ տարեցտարի ավելանան Սյունիքի մարզկենտրոնի գեղեցկությունն ու նվաճումները:

**Առողջությո՛ւն քաղաքի բնակիչներին, խաղա՛ղ երկինք և բարգավաճո՛ւմ՝ մեր քաղաքին:**